ի քեզ բարձունքն խոնարհեալ ջամբեցուցանէր զծովածին ծնունդսն, և դառինքն քաղցրացեալ՝ դիացուցանէր զդեռաբոյս մանկունսն. ի քեզ կրկին քառասուն ջրածինն* աստուածաբանակ լինէր և ուսեալ բերէր աստուածագիծ մատեան՝ տասնբանեան կանոն: Ուր և հաց անձրևանայր, վէմ աղբիւրանայր, լորամարգ խորոված թռուցեալ ի վրանսն մըտանէր. ի քեզ մենացեալ Թեզբացին** քաղցր սքով տեսանէր զանորակն, և զծանաւթ նորին՝ առաք էր բանիւ զԱսորին՝ նախաքարոզ աւազանին, և ալերբ հալածէր զմահացուն՝ յաւրինակ հացին կենաց. և սգալի աչաւք տեսանէր զանմարմինսն կառաւք և երիվարաւք բանակեալ: Ի քեզ մարգարէուհին Յայէլ զՍիսարա զփախուցեալ հսկայն զգետնեալ՝ ցից ընդ ծամելիս վարէր՝ համաքատակ որդւոյ կուսին: Եւ ամլորդին երեսնամեա մեղրաճաշակ լինէր: Եւ աստուածպետականն Յիսուս՝ յետ վկայութեանն Հաւր և առնլոյ Հոգւոյն՝ ի քեզ դիմէր՝ և մենակռուեալ՝ ընկճէր զահագին վիշապն: Այլ և անթիւ հոյլք քաջագաւառացն քև փայլէին յԵգիպտոս. քև Հռիփսիմեանքն հոգլիացան՝ և Քռիւսեանք ոսկիա-

---

*. Լուս. «Մովսէս»:

**. Լուս. «Եղիա»: